

սեղանի վրայ եւս կը պահեն միշտ, զնդե-
րէ՛ գումարտակէ եւ ուրիշ ազնիւ զարդերէ
զատ, նաեւ իրենց զէնքերն՝ ըստ վերոյի-
շեալ վկայութեանց (151), զի անոնց կա-
րեւորութիւնն աւելի էր հոս՝ գինւոյն ա-
նակնկալ եւ կամ նախանկատ թելադրու-
թեանց հանդէպ:

14. — Լուսացումն ձեռաց: — Ճաշի արա-
րողութեանց մասերէն մին էր այս, յայտնի
Եղիշէի տիկնանց նկարագրէն, եւ կը կա-
տարուէր տաճարին մէջ: Կը բերէին լուաց-
ման սպասները, որ է նգոյրն ու տաշտու-
գոյրանը (աստ, 82-6), եւ «նաժիշտ» մ'ա-
նոնց «ջուր ի ձեռս արկանէր», եւ օշնա-
նով՝ կը մաքրուէին. իսկ չորնալու հա-
մար՝ պատուով «կրտսերք աւագաց դաս-
տառակս մատուցանէին» (Եղիշ. 173), որ
յետոյ անձեռոց ալ կոչուեցաւ (ՅՏ. կթղ.
գրչ. ²): Չեոաց այս լուացումը, սեպ-
հական ոչ միայն այդ հիւրընկալ տիկ-
նանց, այլ եւ բոլոր կոչնականաց, հա-
մոգուած եմ՝ թէ կը լինէր սեղանը սկը-
սելէ անմիջապէս յառաջ, ըստ որում նոյն-
պէս կ'ընէին նաեւ Հրեայք (Մտթ. ժե, 2.
Մրկ. Է, 1-5), Բիւզանդացիք (Ոսկ. Թղթ.
Ա, 702) եւ Յոյները (Դար. Ա, 1270, '74),

1. Պրս. ուշնակէն, որ կը նշանակէ «աղային խոտ»
(Հիւրշ. 259): — 2. Վրիպած տպագրէն. 214.